



Այս ձեռնարկը կազմվել է Ամերիկյան Իրավաբանների Ընկերակցության CEELI INC.-ի Հայաստանյան Ներկայացուցչության կողմից: Սույն դիտարկումները հանդիսանում են Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Իրավունքի գերակայության նախաձեռնության ծրագրի սահմաններում իրականացված աշխատանք: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Ամերիկյան իրավաբանների ընկերակցության պատվիրակների պալատի և կառավարիչների խորհրդի կողմից, ուստի և չեն ներկայացնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության դիրքորոշումներն ու տեսակետները: Ի լրումն, սույն ձեռնարկիի որևէ մաս չպետք է ընկալել որպես առանձին գործերի առնչությամբ տրամադրվող իրավական խորհրդատվություն: Սույն ձեռնարկը հնարավոր է դարձել Ամերիկյան իրավաբանների ընկերակցության միջոցով: Նյութի բովանդակության համար պատասխանատու է Ամերիկյան իրավաբանների ընկերակցությունը:

Երևան ©

2016

Contents

Ներածություն.....	3
Տեխնիկա.....	4
Ինչպես օգտագործել դատարանի որոշումները.....	8
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ.....	10
Դատարանի որոշման վերաբերյալ ուսանողներին առաջադրվող հարցեր՝ քրեական իրավունքի կտրվածքով.....	21
Ինչպես կազմել խնդիր.....	24
Նմուշ խնդիրներ՝ հարցերով.....	26

Սոկրատական մեթոդ

Ներածություն

Իրավաբանական կրթության արդյունավետության նախադրյալը ուսանողի մոտ այն հմտությունների ու կարողությունների զարգացումն է, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն տիրապետել իրավական գիտելիքների, այլև դրանք գործնականում արդյունավետորեն և քննադատորեն կիրառել:

Նման հմտությունների և կարողությունների ապահովումը հնարավոր է միայն ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման և իրականացման արդյունքում, ինչն էլ ենթադրում է դասախոսի կողմից ուսուցման տարբեր մեթոդների տիրապետում և դրանց կիրառման հմտություն:

Ժամանակակից իրավաբանական կրթության գործընթացում թե՛ ԱՄՆ-ում, թե՛ եվրոպական երկրներում, առանձին արժեք ունի Սոկրատյան մեթոդի կիրառումը, որը հնարավորություն է տալիս ուսանողին ոչ թե սուկ սերտել օրենքները, այլ խորությամբ հասկանալ դրա էությունը, կիրառել այն, բացահայտել դրա թերությունները, բացերը ու առավելությունները, արագ և հանպատրաստից գտնել առաջադրվող հարցերի հնարավոր լուծումներ:

Սոկրատյան մեթոդը այդպես է անվանվել հույն մեծ մտածող-փիլիսոփա Սոկրատեսի անունով: Նա առաջինն էր, ով սկսեց կիրառել նման մեթոդ՝ անձանց հարցեր ուղղելով, բանավեճի մեջ ներքաշելով՝ դրանով իսկ վերջիններիս մղելով քննադատական մտածողության և նոր գաղափարների ձևավորման: Այն, ըստ էության, դիալեկտիկական մեթոդ է, որը թույլ է տալիս հակադիր տեսակետներ ունեցող անձանց ներկայացնել իրենց փաստարկները, հակընդդեմ փաստարկներ ներկայացնել՝ դրանով իսկ դիմացինին ստիպելով սեփական տեսակետը պաշտպանելու համար փնտրել ու ներկայացնել նոր փաստարկներ, հիմնավորումներ, կամ էլ՝ բացահայտել սեփական դիրքորոշման թույլ և խոցելի կողմերը: Այս մեթոդի կիրառումը նաև հնարավորություն է տալիս հանգել սկզբնական փուլում հակադիր տեսակետներ ունեցող կողմերի համար ընդունելի «ճշմարտության», «լուծման»:

Տեխնիկա

Սոկրատյան մեթոդի առավել հիմնարար դրսևորումն այն է, որ հարցվողին առաջարկվում է ներկայացնել խնդրո առարկայի կամ հարցի վերաբերյալ իր տեսակետը: Դրանից հետո դասախոսը սկսում է տրամաբանորեն կառուցել հարցերի շրջանակ՝ կամ հետևողականորեն բացահայտելով այն հնարավոր հակասությունը, որը արտահայտվել է հարցվողի պատասխանում կամ մղելու նրան ներկայացնելու հիմնավորված փաստարկներ՝ սեփական կարծիքը ամրապնդելու համար կամ մղելու նոր գիտելիքների բացահայտման:

1. Մասնավորապես, եթե հարցվողի պատասխանում առկա է խոցելի կետ կամ հակասություն, դասախոսը պետք է կառուցի հարցերն այնպես, որ ուսանողը ինքը հաջորդական հարցերին տրվող պատասխանների ժամանակ ակնհայտորեն տեսնի սեփական տեսակետի խոցելիությունը: Ընդ որում, հարցադրումներն ուսանողին ուղղելիս, դասախոսը կարող է որոշակիորեն փոփոխել իրավիճակը, օրինակ մեկ տարր ավելացնելով, ինչը կօգնի ուսանողին ճիշտ կողմնորոշվել և ըմբռնել իրավական այս կամ այն կանոնակարգման էությունը:

Օրինակ, դասախոսը կարող է ուսանողին հարց ուղղել. **որքանով եք ճիշտ համարում, որ օրենսդիրը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների խմբերը սահմանելիս, տարբերակված մոտեցում է ցույց տվել դիտավորությամբ և անզգուշությամբ կատարվող հանցագործությունների առումով:**

Նման պարագայում, եթե ուսանողը դրական պատասխան տա, ապա դասախոսը պետք է ուսանողին առաջարկի. **հիմնավորիք տեսակետդ:**

Հաջորդ հարցը, իհարկե ելնելով ուսանողի պատասխանից, պետք է ուղղված լինի այն գործոնի պարզաբանմանը, որ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի կառուցման ժամանակ օրենսդիրը սանկցիայում արդեն իսկ տարբերակում իրականացրել է՝ դիտավորությամբ նույն արարքը կատարելու համար սահմանելով ավելի խիստ, իսկ անզգուշությամբ կատարելու դեպքում՝ ավելի մեղմ պատիժ: Հետևաբար հարցը կլինի հետևյալը. **օրենսդիրը քրեական օրենսգրքի հատուկ մասի սանկցիաների կառուցման ժամանակ արդեն իսկ նախատեսել է այն, որ կոնկրետ արարքը կատարվել է դիտավորությամբ կամ անզգուշությամբ: Օրինակ. դիտավորությամբ կյանքից զրկելու համար պատիժը 8-15 տարի ժամկետով**

ազատագրվում է, մինչդեռ անզգուշությամբ մահ պատճառելու համար՝ ազատագրվում առավելագույնը 5 տարի ժամկետով: Արդյո՞ք նման պարագայում հիմնավորված է հանցագործությունների դասակարգման ժամանակ նույնպես կրկին անգամ տարբերակում իրականացնելը: Եթե օրենսդիրը դիտավորությամբ կատարված արարքի համար նախատեսել է ազատագրվում 2 տարի ժամկետով և անզգուշությամբ մեկ այլ արարքի համար ևս՝ ազատագրվում 2 տարի ժամկետով, արդյո՞ք դա չի նշանակում, որ հանրային վտանգավորության առումով այս երկու արարքները համարժեք են դիտվում:

Հարցադրումների այս շրջանակը թույլ կտա ուսանողին տեսնել սեփական տեսակետի առավել թույլ կողմը, իսկ առանձին դեպքերում՝ արտահայտել լիովին նոր, նույնիսկ օրենսդրական կանոնակարգումից տարբերվող մոտեցումներ:

2. Եթե հարցվող ուսանողի արտահայտած տեսակետը լիովին համապատասխանում է իրավական կարգավորմանը, ապա նրան առաջադրվող հարցերը պետք է ուղղված լինեն պարզելու, թե որքանով է ուսանողը վստահ սեփական տեսակետում, որքանով է նրա դիրքորոշումը հիմնավորված: Առաջադրվող հարցերը կարող են ուղղված լինել՝ որոշակիացնելու ուսանողի գիտելիքները՝ կոնկրետ գործի ըմբռնման կամ իրավական կանոնակարգման կամ իրավունքի գերակա սկզբունքների ըմբռնման առումով:

Օրինակ, եթե խնդիր է առաջադրվում անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության վերաբերյալ, մասնավորապես, դրա առկա և իրական լինելու վերաբերյալ, ապա ուսանողին կարող են առաջադրվել հետևյալ հարցերը. **Ե՞րբ է հնարավոր իրավաչափ անհրաժեշտ պաշտպանությունը:** Եթե ուսանողը իրավացիորեն պատասխանում է, որ այն ժամանակ, երբ ոտնձգությունը սկսվել է, ընթացքի մեջ է և դեռ չի ավարտվել, կամ չի սկսվել, սակայն առկա է դրա սկսվելու իրական սպառնալիք կամ ավարտվել է, բայց դեռ պաշտպանվողը դա չի գիտակցում, ապա դրան կարող է հետևել հաջորդ հարցը՝ **ինչպե՞ս պետք է գնահատենք ոտնձգությունը սկսվելու իրական սպառնալիքը՝ հիմնվելով օբյեկտիվ, թե՞ սուբյեկտիվ չափանիշների վրա:** Եթե ուսանողը նշում է օբյեկտիվ չափանիշը, ապա հետևող հարցերը պետք է ուղղված լինեն նույնիսկ մտացածին իրավիճակներ ներկայացնելուն, որոնք հնարավոր է ուսանողի կողմից արտահայտված տեսակետը խոցելի դարձնեն: Օրինակ, ուսանողին պետք է առաջարկվի հետևյալը. **Եթե ոտնձգողը նախկինում պաշտպանվողին կյանքից զրկելու մի քանի փորձ արել է, սակայն պաշտպանվողը այդ մասին տեղյակ չի եղել, արդյո՞ք այդ օբյեկտիվ**

հանգամանքները պետք է հաշվի առնել, եթե պաշտպանվողը կյանքից զրկի ոտնձգողին՝ վերջինիս կողմից պաշտպանվողի տուն մտնելու նպատակով տան դուռը կոտրելու փորձի ժամանակ:

Հարցերի թվաքանակի սահմանափակում չկա, հետևաբար դասախոսը կարող է դրանք ուղղել հարցվողին՝ հասկանալու, թե որքա՞նով է վերջինս խորությամբ ընկալում նյութը, կամ նպատակ ունենալով նրան քայլ առ քայլ, հետևողականորեն հանգեցնել որոշակի եզրահանգման:

Սոկրատյան մեթոդի կիրառման նպատակներից մեկն այն է, որ հարցվողին ոչ թե մատուցվի պատասխանը, այլ հարցվողը ինքը տեսնի իր «սխալը», այլևս չկարողանա պաշտպանել իր առաջարկած տեսակետը կամ ընդհակառակը՝ ներկայացնի նոր, առավել պատճառաբանված հիմնավորումներ ու փաստարկներ՝ սեփական տեսակետը պաշտպանելու համար:

Սոկրատյան մեթոդի առավել բնորոշ գծերից մեկն այն է, որ հաճախ խնդրո առարկայի վերաբերյալ չի լինում հստակ ճիշտ կամ սխալ պատասխան: Այս մեթոդի կիրառման հիմնական նպատակը ոչ թե պատասխան չունեցող հարցերին պատասխանելն է, այլ հաճախ առավել բարդություն ունեցող իրավական հարցեր ուրվագծելը, ուսումնասիրելը, ուսանողներին խոր վերլուծական մտածողության հմտություններ փոխանցելը, հմտություններ, որոնց կարիքը նրանք կունենան որպես իրավաբաններ և փաստաբաններ: Սոկրատյան մեթոդը նաև ստիպում է ուսանողներին հանպատրաստից մտածել, առանց պատասխան պաստրաստելու համար ժամանակ տրամադրելու, ինչը կարևոր հմտություն է, հատկապես դատական նիստերի դահլիճում գործունեություն ծավալող իրավաբանների, փաստաբանների համար:

Առավել հաճախ Սոկրատյան մեթոդը կիրառվում է կոնկրետ գործերի, օրինակ՝ նախադեպային գործերի ուսումնասիրության, քննարկման ժամանակ: Այս մեթոդի կիրառումը ուսանողին հնարավորություն է տալիս քայլ առ քայլ հետևել, թե դատավորի կողմից կայացված վճիռը կամ դատավճիռը ի՞նչ գործոնների հիման վրա է կայացվել, ինչպես է ձևավորվել համոզմունքը: Իհարկե, դատավորը ևս ունի սուբյեկտիվ ընկալման որոշակի աստիճան, հետևաբար դատավճռում կամ վճռում ներկայացված առանձին դրույթներ ենթակա են վիճարկման:

Սոկրատյան մեթոդի կիրառումը կարող է իրականացվել մի քանի տարբերակով:

1. Դասաժամին ուսանողը պատահականության սկզբունքով ընտրում է մի ուսանողի և առաջարկում ներկայացնել առաջադրված խնդրի կամ հարցի վերաբերյալ իր տեսակետը: Ուսանողի ընտրությունը կարող է կատարվել նաև այլ հիմքերով, այդ թվում՝ ուսանողը ինքը կարող է պատրաստակամություն հայտնել պատասխանելու: Ուսանողը նախ պետք է ներկայացնի խնդրի հանգամանքները, ինչը թույլ կտա դասախոսին հասկանալ, որ ուսանողը կարդացել և հասկացել է գործի հանգամանքները: Ուսանողի պատասխանից կախված՝ դասախոսը տալիս է նոր հարցեր՝ արտահայտված տեսակետի վերաբերյալ, մղելով ուսանողին առավել ամրապնդել իր դիրքորոշումը կամ բացահայտել դրա թերի, խոցելի կողմերը: Դասախոսը տրված պատասխանի վերաբերյալ ներկայացնում է իր հակափաստարկները՝ ուսանողին մղելով նոր փաստարկներ փնտրելու, սեփական դիրքորոշումը պաշտպանելու: Դասախոսը կարող է փոխել գործի փաստերը կամ հանգամանքները՝ ստուգելու համար ուսանողի արագ կողմնորոշվելու, պատճառաբանված փաստարկներ ներկայացնելու կարողությունը: Այս մեթոդը սովորեցնում է ուսանողներին ոչ թե պարզապես անգիր անել փաստերը կամ օրենքները, այլ փոխարենը կենտրոնանալ կոնկրետ գործով փաստերը օրենքի տեսանկյունից կիրառելու վրա:
2. Դասախոսը ուսանողներին առաջարկում է ուսումնասիրել որևէ դատական նախադեպ: Դասի ժամանակ դասախոսը ընտրում է որևէ ուսանողի և առաջարկում ներկայացնել դատական գործի հանգամանքները: Դա նախ, թույլ է տալիս դասախոսին հասկանալու, որ ուսանողը որքանով է ծանոթացել գործին և ընկալել դրա էությունը: Որպեսզի Սոկրատյան մեթոդն արդյունավերորեն աշխատի, ուսանողները պետք է նախապես պատշաճ կերպով նախապատրաստվեն դասին՝ կարդալով հանձնարարված նյութերը և ընդհանուր կերպով ծանոթանալով խնդրո առարկայի հետ:

Ապա դասախոսը առաջարկում է ուսանողին ներկայացնել դատարանի կողմից վճռի կամ դատավճռի կայացման փաստարկները, սկսում է հարցեր տալ՝ դատարանի փաստարկն ավելի խորը վերլուծելու համար:

Դասախոսը կարող է ստիպել ուսանողին պաշտպանել դատարանի դիրքորոշումը, նույնիսկ եթե ուսանողը համաձայն չէ դրա հետ:

Հարցման ընթացքում, դասախոսը կարող է ներգրավել նաև այլ ուսանողների, առաջարկելով վերջիններիս ներկայացնել իրենց պատճառաբանված փաստարկները կամ հակափաստարկները: Այս մեթոդի առավելությունն այն է, որ խթանում է ուսանողների հետաքրքրասիրությունը և նույնիսկ այդ օրը դասին անպատրաստ եկած ուսանողներին ստիպում մտածել:

3. Դասախոսը ներկայացնում է գործի հանգամանքները, ապա ուսանողների խմբին բաժանում է երկու խմբի՝ մի մասին հանձնարարելով ներկայացնել պաշտպանական կողմի փաստարկներ, մյուսներին՝ մեղադրական կողմից: Կարևոր է այն, որ հաճախ ուսանողը ստիպված է լինում ներկայացնել փաստարկներ նույնիսկ այն տեսակետի վերաբերյալ, որը լիովին հակասում է իր ներքին դիրքորոշմանը: Նման մեթոդը խթանում է նաև խմբային մտածողությունը, թույլ է տալիս, որ ուսանողները փնտրեն օրիգինալ տեսակետներ, փաստարկներ, դրանք քննարկեն խմբում և նոր ներկայացնեն: Առավել ուշագրավ է, որ հակափաստարկներով հանդես են գալիս հակառակ խմբի ուսանողները՝ դրանով իսկ փնտրելով դիմացիների տեսակետների խոցելի կետերը:
4. Սոկրատյան մեթոդի կիրառման տարբերակներից է նաև համոզմունքային հիմքի և իրավական փիլիսոփայության վերաբերյալ քննարկումներ իրականացնելը, որը, սակայն արդյունավետորեն հնարավոր է ուսանողների կողմից որոշակի տեսական պատրաստվածության պարագայում:

Ինչպես օգտագործել դատարանի որոշումները

Սոկրատյան մեթոդի կիրառման առավել տարածում գտած տարբերակներից է դատարանի որոշումների (նախադեպերի) վերլուծությունն ու քննարկումը: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ դատարանի որոշումների (նախադեպերի)

ուսումնասիրությունը իրավական ուսուցման ինքնուրույն մեթոդ է, որը սակայն, դասախոսների կողմից հաճախ զուգակցվում է Սոկրատյան մեթոդի հետ:

Այս մեթոդի կիրառման ժամանակ՝ դասախոսը ուսանողին առաջարկում է ներկայացնել գործի հանգամանքները՝ առանձնացնելով նրանք, որոնք էական նշանակություն են ունեցել վերջնական եզրահանգման հանգելու համար, ապա դատարանի կողմից վճռի կամ դատավճռի կայացման փաստարկները՝ համադրված իրավական կարգավորումների հետ, սկսում է հարցեր տալ՝ դատարանի փաստարկն ավելի խորը վերլուծելու համար:

Դասախոսը ուսանողին կարող է առաջարկել վեր հանել այն հանգամանքը կամ հանգամանքները, որոնց փոփոխման դեպքում դատարանի վճիռը կամ դատավճիռը այլ կլիներ և փաստարկված պարզաբանել, թե դա ինչն^օվ է պայմանավորված:

Առավել հետաքրքիր են այն իրավիճակները, երբ դատարանի որոշմամբ լուծում է տրվել մի հարցի, որի վերաբերյալ առկա են նաև այլ դատական որոշումներ: Նման պարագայում, ուսանողները պետք է արդեն ծանոթանան ոչ թե մեկ, այլ մի քանի դատական որոշումների, վերլուծեն և համադրեն դրանք, պարզաբանեն, թե արդյո՞ք դրանցում նույն խնդիրն է արծարծված, թե իրականում տարբեր հարցեր են բարձրացված, եթե նույն խնդիրն է, ապա ի՞նչ լուծումներ են տրվել և եթե դրանք միմյանից տարբերվող են, ինչու՞ են դրանք տարբեր և ո՞րն է ճիշտ:

Դատարանի որոշումների կիրառման ժամանակ, չափազանց կարևոր է, որ դասախոսը հմտորեն կարողանա շարադրել այն հարցերը, որոնք պետք է ուսանողի ուղղորդեն դատարանի որոշումը ճիշտ ընկալելուն: Ի վերջո, այդ մեթոդի նպատակն է, որ ուսանողը ոչ միայն ամրապնդի իրավական նորմի իր իմացությունը, այլ կարողանա հասկանալ, թե կոնկրետ գործի պարագայում այն ինչպես է կիրառվել, գործի ո՞ր հանգամանքներն են հաշվի առնվել, էական նշանակություն ունեցել, դատարանը ի՞նչ իրավական ակտեր է վերլուծել, ինչպե՞ս է դրանք մեկնաբանել, ինչպե՞ս է հանգել կոնկրետ եզրահանգման, ինչպե՞ս է փաստարկել իր դիրքորոշումները:

Դիտարկենք դա ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման օրինակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԱՎԴ2/0059/01/08 քրեական վերաքննիչ դատարանի որոշում գործ հ. ԱՎԴ2/0059/01/08

Նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան, դատավորներ՝ Ս.Ավետիսյան
Մ.Միմոնյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), նախագահությամբ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ մասնակցությամբ դատավորներ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ Ս.ՕՉԱՆՅԱՆԻ Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ Վ.ԱԲԵԼՅԱՆԻ Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին, ք.Երևանում, դռնբաց դատական նիստում, քննելով Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով բողոք բերած անձ Հուսիկ Բաղդասարյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը Հուսիկ Սուրիկի Բաղդասարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի մայիսի 21-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. Լևոն Տեր-Պետրոսյանի և մի խումբ անձանց կողմից պետական իշխանությունը յուրացնելու փաստի առթիվ 2008 թվականի փետրվարի 24-ին ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Նախաքննության մարմնի 2008 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ Հուսիկ Սուրենի Բաղդասարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ

հողվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը: 2008 թվականի մարտի 18-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց-Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան:

2. Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մարտի 31-ի դատավճռով Հուսիկ Սուրենի Բաղդասարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է ազատազրկման 3 /երեք/ տարի ժամկետով: Ամբաստանյալ Հուսիկ Բաղդասարյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008 թվականի մայիսի 21-ի որոշմամբ պատժի մասով փոփոխել է Հ.Բաղդասարյանի վերաբերյալ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մարտի 31-ի դատավճիռը և նրան դատապարտել ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով:

3. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի մայիսի 21-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել հավատարմագրված փաստաբանը: Վճռաբեկ դատարանը 2008 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմքով: Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

4. 2008 թվականի փետրվարի 24-ին որոշում է կայացվել քննչական խումբ կազմելու մասին և ՀՀ Կառավարությանն առընթեր ԱԱԾ քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչին հանձնարարվել է ղեկավարել խմբի գործողությունները:

5. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2008 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ բավարարել է ՀՀ ԱԱԾ քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչի միջնորդությունը և թույլատրել խուզարկություն կատարել Հուսիկ Բաղդասարյանի բնակության վայրում՝ Արարատի մարզի Մասիս քաղաքի 38-րդ շենքի թիվ 14 բնակարանում:

6. 25.02.2008 թվականին ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության պետին ուղարկվել է առանձին քննչական գործողություն կատարելու հանձնարարություն, որով խնդրվել է կատարել խուզարկություններ Արարատի մարզի մի շարք բնակիչների բնակության վայրերում՝ այդ թվում նաև Հուսիկ Բաղդասարյանի բնակարանում:

7. 2008 թվականի փետրվարի 26-ին խուզարկություն է կատարվել Հուսիկ Բաղդասարյանի բնակության վայրում՝ Արարատի մարզի Մասիս քաղաքի 38-րդ շենքի թիվ 14 բնակարանում և կազմվել է խուզարկություն կատարելու մասին արձանագրություն, համաձայն որի՝ Հուսիկ Բաղդասարյանը կամովին ներկայացրել է իրեն պատկանող զենքը և զինամթերքը, այդ թվում նաև 16 հատ 7,62 մմ տրամաչափի փամփուշտները:

8. 2008 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ Հուսիկ Սուրենի Բաղդասարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 1999 թվականին ապօրինի կերպով ձեռք է բերել և իր բնակարանում պահել ռազմամթերք հանդիսացող 7,62 մմ տրամաչափի 16 հատ փամփուշտներ, որոնք 2008 թվականին խուզարկությամբ հայտնաբերվել և առգրավվել են նրա բնակարանից:

9. Հանդիսանալով ՀՀ որսորդների միության հասարակական կազմակերպության անդամ և ունենալով զենք կրելու իրավունք՝ Հուսիկ Բաղդասարյանը 1999 թվականին Երևանի «Որսորդ» խանութից ձեռք է բերել «Տիգր» տեսակի որսորդական ակոսափող հրացան և դրա համար նախատեսված 7.62մմ տրամաչափի փամփուշտներ, որոնք սահմանված կարգով գրանցել է, իսկ 2004 թվականին՝ վերագրանցել:

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության 27.03.2008 թվականի թիվ 20/1203 գրության համաձայն՝ ՀՀ ոստիկանության ՓՔՎ փորձագետի «N 380»-08 եզրակացությանը ներկայացված 1998 թվականի գործարանային արտադրության 7,62մմ տրամաչափի 22651 համարի «Տիգր» տեսակի որսորդական ակոսափող ինքնալից կարաբինից ստուգողական վեց կրակոցների արդյունքում ստացված փորձանմուշները /գնդակներ և պարկուճներ/ ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության հանրապետական գնդակապարկուճադարանում վերցված են համապատասխան հաշվառման 2004 թվականից: Վերը նշված որսորդական ակոսափող ինքնալից կարաբինից /երկու պահունակներով՝ յուրաքանչյուր պահունակից երեքական փամփուշտներ/ փորձանմուշներ ստանալու նպատակով ՀՀ ոստիկանության ՀԿԱ վարչությունից ներկայացվել են 6 հատ 7,62մմ տրամաչափի /7.62.54R/ որսորդական փամփուշտներ. 4 հատը՝ «7.62.54R WOLF», իսկ 2-ը՝ «7.62.54R 00 VE» գործարանային դրոշմվածքներով:

10. ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության փորձագետների 2008 թվականի մարտի 13-ի թիվ 380 եզրակացության համաձայն՝ Հ.Բաղդասարյանի բնակության վայրից խուզարկությամբ հայտնաբերված 16 հատ 7,62 մմ տրամաչափի փամփուշտները պիտանի են օգտագործման համար և հանդիսանում են

ռազմամթերք:

Հ.Բաղդասարյանի բնակարանից խուզարկությամբ հայտնաբերված 16 հատ 7,62 մմ տրամաչափի փամփուշտները նախատեսված են «ՊԿ» տեսակի գնդացիներից, «ՍՎԴ» տեսակի նշանառու հրացաններից և այլ տեսակի մարտական զենքերից կրակելու համար, սակայն դրանք նախատեսված չեն Հ.Բաղդասարյանի բնակարանից խուզարկությամբ հայտնաբերված 7.62մմ տրամաչափի «Տիգր» տեսակի 22651 գործարանային համարի որսորդական ակոսափող ինքնալից կարաբինից կրակելու համար:

11. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով գործի հանգամանքները, Հ.Բաղդասարյանի հանցավոր արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, գտել է, որ սույն քրեական գործի շրջանակներում բավարար հիմքեր չկան նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման համար:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոք բերած անձը գտնում է, որ դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքներին, դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներին, իսկ դատարանի պատճառաբանությունները բացարձակ անհիմն են, քանի որ նշված ապացույցները ձեռք չեն բերված օրենքով սահմանված կարգով և չէին կարող հանդիսանալ ապացույց Հուսիկ Բաղդասարյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված համարելու համար:

13. Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Հուսիկ Բաղդասարյանն ունեցել է մարտական զենք, ինչպես նաև «Տիգր» տեսակի որսորդական ակոսափող ինքնալից կարաբին հրացան պահելու և կրելու իրավունք: Նրա այդ իրավունքը հաստատված է գործում գտնվող ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից սահմանված կարգով տրված թույլտվությամբ: Այսինքն՝ նա ունեցել է մարտական զենքից և հրացանից կրակվող ցանկացած տիպի փամփուշտ ձեռք բերելու և պահելու իրավունք: Հետևաբար նա ունեցել է նաև իր օրինական կարգով ունեցած զենքերից կրակվող 7,62 մմ տրամաչափի փամփուշտները ձեռք բերելու և պահելու իրավունք: Հուսիկ Բաղդասարյանը հայտնել է, որ իր բնակարանում հայտնաբերված 7,62 մմ տրամաչափի փամփուշտները նա գնել է Մաշտոցի պողոտայի վրա գտնվող «Որսորդ» խանութից՝ հրացանի հետ միասին, որոնք եղել են ազատ վաճառքում, այսինքն՝ դրանք ձեռք են

բերվել օրինական հիմքով: Եվ եթե նույնիսկ համարվի, որ Հ.Բաղդասարյանն ապօրինի կերպով ձեռք է բերել ու պահել ռազմամթերք հանդիսացող փամփուշտներ, ապա առկա է արարքի «ոչ դիտավորությամբ» կատարելը: Ուստի սխալ է վերաքննիչ դատարանի եզրահանգումը, թե Հ.Բաղդասարյանը նշված արարքը կատարել է ուղղակի դիտավորությամբ:

14. Դատարանը պետք է անթույլատրելի համարեր 2008 թվականի փետրվարի 26-ի խուզարկության արձանագրությունը, քանի որ այն կազմվել է տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի՝ ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնի ավագ հետաքննիչ Միրզոյանի կողմից:

15. Սույն գործով փորձաքննությունը կատարվել է դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ, փորձագետների թիվ 380 եզրակացությունը չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-րդ հոդվածի պահանջներին, ուստի այն դատարանի կողմից պետք է համարվեր անթույլատրելի ապացույց, ինչը դատարանը չի արել:

16. Դատարանն ուշադրություն չի դարձրել այն հանգամանքի վրա, որ Հուսիկ Բաղդասարյանը նշված փամփուշտները կամովին ներկայացրել է խուզարկությանը մասնակից ոստիկաններին, որը նշված է խուզարկության արձանագրության մեջ: Այս դեպքում պետք է կիրառվեր ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված պահանջը, որի համաձայն՝ սույն հոդվածում նշված առարկաները կամովին հանձնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում: Մինչդեռ դատարանը չի կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի իմպերատիվ պահանջը և ապօրինի նրան ենթարկել է քրեական պատասխանատվության:

17. Չնայած վերաքննիչ դատարանը նշել է, որ Արարատի և Վայոց-Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը պատիժ նշանակելիս հաշվի չի առել Հ.Բաղդասարյանի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, թվարկել է դրանք, սակայն այդ ամենն ավելի շուտ կրում է ձևական բնույթ, որով փորձել է օրինական տեսք տալ առաջին ատյանի դատարանի ակնհայտ անարդար դատավճռին և իբր թե մեղմացնել դրա անբարենպաստ հետևանքները:

18. Գտնելով, որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտումները հանգեցրել են ծանր հետևանքների, ինչպես նաև սույն գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության

համար՝ բողոք բերած անձը պահանջել է բողոքը ընդունել վարույթ, բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 21-ի որոշումը, փոփոխել դատական ակտը և Հուսիկ Բաղդասարյանի նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

19. Ապօրինի կերպով ռազմամթերք հանդիսացող 16 հատ մարտական փամփուշտներ ձեռք բերելու և պահելու մեջ Հուսիկ Բաղդասարյանի մեղավորությունը հաստատված է նրա բնակարանում խուզարկություն կատարելու մասին արձանագրությամբ, իրեղեն ապացույց 16 հատ 7,62մմ տրամաչափի մարտական փամփուշտներով, ՀՀ ոստիկանության փորձագիտական վարչության փորձագետների 2008 թվականի մարտի 13-ի թիվ 380 եզրակացությամբ, ինչպես նաև դատարանին տրված նույն վարչության 27.03.2008 թվականի թիվ 20/1203 գրությամբ: Որոշման հիմքում դրված վերը նշված ապացույցները վերաքննիչ դատարանը հետազոտել է դատաքննության ժամանակ և դրանք գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, հանգել է ճիշտ եզրակացության: Այս ապացույցների առկայության պայմաններում կատարված հանցագործության մեջ Հ.Բաղդասարյանի մեղավորության մասին վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ այդ կապակցությամբ վճռաբեկ բողոքում բերված փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտել:

Այսպես՝ անհիմն է բողոքի այն փաստարկը, թե դատարանը պետք է անթույլատրելի համարեր 2008 թվականի փետրվարի 26-ի խուզարկության արձանագրությունը, քանի որ այն կազմվել է տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի՝ ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնի ավագ հետաքննիչ Միրզոյանի կողմից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ քրեական գործն իր վարույթն ընդունելուց հետո քննիչը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքին համապատասխան իրականացնել քննչական և այլ դատավարական գործողություն-

ներ: Նույն հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ քննիչը լիազորված է իր կողմից նախապատրաստվող նյութերով և քրեական գործով հետաքննության մարմնին նրա համար պարտադիր գրավոր հանձնարարություններ տալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մասին: Իսկ նշված հոդվածի 10-րդ կետը սահմանում է, որ նա լիազորված է առանձին քննչական գործողությունների կատարումը հանձնարարել հետաքննության մարմնին: Քրեական գործի նյութերից /գ.թ. 4/ երևում է, որ 24.02.2008 թվականի որոշմամբ ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Մ.Մարուքյանի կողմից հարուցվել է քրեական գործ, և այն ընդունվել է վարույթ: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ /գ.թ.5/ ստեղծվել է քննչական խումբ, և Մ.Մարուքյանին հանձնարարվել է ղեկավարել խմբի գործողությունները: 25.02.2008 թվականին ՀՀ Ոստիկանության Արարատի մարզային վարչության պետին ուղարկվել է առանձին քննչական գործողություն կատարելու հանձնարարություն, որով խնդրվել է խուզարկություններ կատարել Արարատի մարզի մի շարք բնակիչների բնակության վայրերում՝ այդ թվում նաև Հուսիկ Բաղդասարյանի բնակարանում /գ.թ. 10/: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ քննիչը առանձին քննչական գործողության կատարումը հանձնարարել է հետաքննության մարմնին, որն էլ օրինական կարգով կատարել է խուզարկությունը:

20. Անհիմն է բողոքի այն փաստարկը, թե Հուսիկ Բաղդասարյանը 16 հատ 7,62մմ տրամաչափի փամփուշտները կամովին ներկայացրել է խուզարկությանը մասնակից ոստիկաններին, հետևաբար նա պետք է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա ազատվեր քրեական պատասխանատվությունից: Հանձնումը համարվում է կամովին, եթե անձը, գիտակցելով, որ այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիք չկա, իր հայեցողությամբ հանձնում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները, այսինքն՝ անձի ընդունած այդ որոշումը պետք է լինի ազատ և գիտակցված ընտրության արդյունք: Բացահայտման իրական սպառնալիքի առկայությունը և դրանից դրդված հանձնումը չի կարող համարվել կամովին: Այն դեպքերում, երբ իշխանությունները տեղյակ են կոնկրետ անձի մոտ նշված առարկաների առկայության մասին և առաջարկում են հանձնել դրանք, հանձնումը կամովին համարվել չի կարող: Այս պայմաններում դա կարող է դիտվել միայն որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք: Սույն գործով ռազմամթերք հանդիսացող 16 հատ 7,62մմ տրամաչափի մարտական փամփուշտները հանձնվել են ապօրինի զենք ու ռազմամթերք հայտնաբերելու և առգրավելու հետ կապված քննչական

գործողություն կատարելու ընթացքում, որը վերը շարադրված պատճառաբանությամբ կամովին հանձնում չէ և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք հանդիսանալ չի կարող:

21. Անհիմն է նաև բողոքի այն փաստարկը, թե Հուսիկ Բաղդասարյանը նշված արարքը կատարել է «ոչ դիտավորությամբ», այսինքն՝ բացակայում է ուղղակի դիտավորությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ. անձը գիտակցում է, որ ապօրինի կերպով ձեռք է բերում, իրացնում, պահում, փոխադրում կամ կրում զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր, գիտակցում է իր գործողությունների՝ հանրության համար վտանգավոր բնույթը և ցանկանում է կատարել այդ գործողությունները: Գործի նյութերից երևում է, որ Հուսիկ Բաղդասարյանը նախկինում ՀՀ ՊՆ նախարարության համակարգում զբաղեցրել է մի շարք պաշտոններ, ունի զինվորական մայորի կոչում, մասնակցել է ՀՀ սահմանների պաշտպանության և Արցախի ինքնապաշտպանության մարտերին, քաջատեղյակ է զենքի ու ռազմամթերքի մարտական և ոչ մարտական լինելու մասին, իրագել է եղել, որ այդ փամփուշտները մարտական են, դրանց ապօրինի շրջանառությունը «Զենքի մասին» ՀՀ օրենքի խախտում է և քրեական պատասխանատվության հիմք, սակայն ռազմամթերք հանդիսացող այդ փամփուշտները նա ապօրինի կերպով ձեռք է բերել ու պահել, այսինքն՝ գործել է ուղղակի դիտավորությամբ:

22. Անհիմն է նաև փորձագետների թիվ 380 եզրակացությունն անթույլատրելի ապացույց համարելու մասին բողոքի փաստարկը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված եզրակացությունը հիմնված է փորձագետներին տրամադրված բոլոր օբյեկտների հետազոտման վրա, բովանդակում է սպառիչ պատասխաններ առաջադրված բոլոր հարցերին, դրանք չեն հակասում գործի փաստական հանգամանքներին, փորձաքննություն նշանակելիս և անցկացնելիս թույլ չեն տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, այն գնահատվել է ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված դատարանի ներքին համոզմամբ, ուստի այդ եզրակացությունն անթույլատրելի ապացույց համարելու հիմքեր չկան:

23. Անհիմն է նաև բողոքի այն փաստարկը, թե Հ.Բաղդասարյանի բնակարանում հայտնաբերված 7,62մմ տրամաչափի մարտական փամփուշտները նա գնել է Երևանի Մաշտոցի պողոտայի վրա գտնվող «Որսորդ» խանութից՝ «Տիգր» տեսակի

հրացանի հետ միասին, որոնք եղել են օրինական վաճառքում: Ինչպես երևում է ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության 27.03.2008 թվականի թիվ 20/1203 գրությունից, ՀՀ ոստիկանության ՓՔՎ փորձագետի «N 380»-08 եզրակացությանը ներկայացված 1998 թվականի գործարանային արտադրության 7.62մմ տրամաչափի «22651» համարի «Տիգր» տեսակի որսորդական ակոսափող ինքնալից կարաբինից ստուգողական վեց կրակոցների արդյունքում ստացված փորձանմուշները /գնդակներ և պարկուճներ/ ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության հանրապետական գնդակապարկուճադարանում վերցված են համապատասխան հաշվառման 2004 թվականից: Վերը նշված որսորդական ակոսափող ինքնալից կարաբինից /երկու պահունակներով՝ յուրաքանչյուր պահունակից երեքական փամփուշտներ/ փորձանմուշներ ստանալու նպատակով ՀՀ ոստիկանության ՀԿՍ վարչությունից ներկայացվել են 6 հատ 7.62մմ տրամաչափի /7.62.54R/ որսորդական փամփուշտներ. 4 հատը՝ «7.62.54R WOLF», իսկ 2-ը՝ «7.62.54R 00 VE» գործարանային դրոշմվածքներով:

Մինչդեռ ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության փորձագետների 2008 թվականի մարտի 13-ի թիվ 380 եզրակացությունից երևում է, որ Հ.Բաղդասարյանի բնակության վայրից խուզարկությամբ հայտնաբերված 16 հատ 7.62 մմ տրամաչափի փամփուշտները պիտանի են օգտագործման և հանդիսանում են ռազմամթերք: Նույն եզրակացության համաձայն՝ դրանք հրացանային մարտական փամփուշտներ են, որոնք նախատեսված են «ՊԿ» տեսակի գնդացիներից, «ՍՎԴ» տեսակի նշանառու հրացաններից և այլ տեսակի մարտական զենքերից կրակելու համար և նախատեսված չեն Հ.Բաղդասարյանի բնակության վայրից խուզարկությամբ հայտնաբերված 7.62մմ տրամաչափի «Տիգր» տեսակի 22651 գործարանային համարի որսորդական ակոսափող ինքնալից կարաբինից կրակելու համար:

24. Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ պատճառաբանված չէ վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, թե Հ.Բաղդասարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմքեր չկան: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Փաստորեն պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց իրական պատիժ նշանակելու ամբաստանյալի ուղղվելու:

հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Ինչպես երևում է գործի նյութերից, Հ.Բաղդասարյանն առաջին անգամ կատարել է միջին ծանրության հանցանք, նախկինում արատավորված չի եղել, մասնակցել է ՀՀ սահմանների պաշտպանության և Արցախի ինքնապաշտպանության մարտերին, ունի մայրի զինվորական կոչում, երկար տարիներ հրամանատարական տարբեր պաշտոններ է զբաղեցրել ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում, ՀՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է Արիության մեդալով, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով պարգևատրվել է անվանական զենքով, ինամքին ունի 3 անչափահաս երեխա, որոնցից մեկը՝ մինչև 14 տարեկան: Հուսիկ Բաղդասարյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Հաշվի առնելով Հ.Բաղդասարյանի անձը բնութագրող վերը նշված տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ուստի նրա նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չպետք է կիրառել:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Հ.Բաղդասարյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը:

25. Գործում Հ.Բաղդասարյանի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների առկայության և պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում որոշում կայացնելով նրա նկատմամբ պատիժը

պայմանականորեն չկիրառելը մերժելու մասին՝ վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում. չի կիրառել օրենքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման:Դա հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող չհիմնավորված որոշման կայացման:

26. Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը կրելու մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա բեկանել և փոփոխել վերաքննիչ դատարանի դատական ակտը, քանի որ վերջինիս կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնել նման ակտ, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

27. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության խնդիր: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի մայիսի 21-ի որոշումը բեկանել և փոփոխել. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Հուսիկ Բաղդասարյանի նկատմամբ նշանակված 2 (երկու) տարի ազատազրկումը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով: Հուսիկ Բաղդասարյանին անհապաղ ազատել պատիժը կրելուց:

2. Որոշման մնացած մասը թողնել անփոփոխ:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Դատավորներ՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ս.ՕՉԱՆՅԱՆ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆ
Վ.ԱԲԵԼՅԱՆ
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

Հատուկ կարծիք:	Ոչ
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Հովհաննես Հաբեթնակի Ղուկասյան
ՀՀ Քրեական օրենսգիրք:	Հոդված 70. Պատիժը պայմանականորեն չկիրառելը, Հոդված 235. Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը

Դատարանի որոշման վերաբերյալ ուսանողներին առաջադրվող հարցեր՝ քրեական իրավունքի կտրվածքով

1. Ներկայացրեք գործի դատավարական նախապատմության մեջ նկարագրված հանգամանքները
2. Այդ հանգամանքներից առանձնացրեք նրանք, որոնք վերաբերում են քրեաիրավական (սյուրաիրավական) խնդիրներին
3. Գործում քրեաիրավական ի՞նչ խնդիրներ են արձարծվել և ի՞նչ դատավճիռ է կայացրել Արարատի և Վայոց-Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը
4. Գործի դատավարական նախապատմության մեջ նկարագրված հանգամանքներից որո՞նք են նշանակություն ունեցել Արարատի և Վայոց-Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավճռի կայացման համար
5. Իրավական ո՞ր նորմերն են հիմք հանդիսացել Արարատի և Վայոց-Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատավճռի կայացման համար
6. Ի՞նչ որոշում է կայացրել ՀՀ Վերաքննիչ դատարանը

7. Ինչո՞վ է ՀՀ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը տարբերվել Արարատի և Վայոց-Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավճռում արտահայտված դիրքորոշումից
8. Գործի դատավարական նախապատմության մեջ նկարագրված ո՞ր հանգամանքները կամ իրավական ի՞նչ մոտեցումները կարող էին նշանակություն ունենալ ՀՀ Վերաքննիչ դատարանի կողմից նման որոշման կայացման համար
9. Ի՞նչ հիմնախնդիրներ են արծարծվել Վճռաբեկ բողոքում
10. Այդ հիմնախնդիրների վերաբերյալ ի՞նչ փաստարկներ են ներկայացվել փաստաբանի կողմից
11. ՀՀ օրենսդրության համաձայն՝ ի՞նչ է զենքը և ո՞ր զենքի շրջանառության պարագայում է օրենսդիրը սահմանում քրեական պատասխանատվություն
12. Ինչու՞ է Հ. Բաղդասարյանը պատասխանատվության ենթարկվել միայն փամփուշտների ապօրինի ձեռքբերման, պահելու համար, մինչդեռ նրա բնակարանում հայտնաբերված որսորդական ակոսափող հրացանի համար նման խնդիր չի առաջացել:
13. Ո՞ր դեպքերում է անձը ստանում մարտական զենք ձեռք բերելու, պահելու, կրելու իրավունք և ո՞րտեղ է այն գրանցվում:
14. Հնարավոր է արդյո՞ք, որ անձին տրվի մարտական զենք ձեռք բերելու, պահելու, կրելու իրավունք ընդհանրական կերպով, թե դա վերաբերում է միայն կոնկրետ զենքին, որը պետք է ենթարկվի հաշվառման:
15. Ե՞րբ է անձը հանցանքը կատարում դիտավորությամբ:
16. Կարող էր արդյո՞ք դատարանը պնդել, որ Հ. Բաղդասարյանը, տանը ռազմամթերք պահելով, գործել է դիտավորությամբ, եթե նա նախկին զինծառայող չլիներ:
17. Արդյո՞ք դիտավորության գնահատման համար նշանակություն ունի այն հանգամանքը, որ Հ. Բաղդասարյանը փամփուշտները ձեռք է բերել «Որսորդ» խանութից:
18. Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ ՀՀ քրեական օրենսդրքի հոդված 235-ի 5-րդ մասի կիրառման համար:
19. Ի՞նչ պետք է հասկանալ զենքը «կամովին» հանձնել հասկացության ներքո և ե՞րբ է դա հնարավոր:
20. Որքանո՞վ է հիմնավոր դատարանի այն փաստարկը, որ զենքը «կամովին» հանձնել հասկացությունը կոնկրետ գործում առկա չէ:

21. Կփռիվեր արդյո՞ք դատարանի դիրքորոշումը, եթե Հ. Բաղդասարյանը զենքը հանձներ այն բանից հետո, երբ ոստիկանները խուզարկությունը կատարեին-ավարտեին, սակայն ոչինչ չհայտնաբերեին:
22. Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ ՀՀ քրեական պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի կիրառման համար:
23. Ո՞ր հանգամանքների հիման վրա Վճռաբեկ դատարանը որոշում կայացրեց, որ Հ. Բաղդասարյանի նկատմամբ պետք է կիրառվեր ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 70-ը:
24. Հ. Բաղդասարյանին վերաբերող ո՞ր հանգամանքները դիտվեցին որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ:
25. Արդյո՞ք առաջին անգամ միջին ծանրության հանցանք կատարելը կարող էր դիտվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:
26. Սպառիչ է արդյո՞ք պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների ցանկը:
27. Որո՞նք են պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները:
28. Արդյո՞ք գործում առկա են պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ:
29. Եթե առկա լինեի մեկ ծանրացնող հանգամանք, արդյո՞ք դա պետք է խոչընդոտ հանդիսանար ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 70-ը չկիրառելու համար:
30. Համաձայն էք արդյո՞ք ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման և ներկայացված հիմնավորումների հետ: Ներկայացրեք Ձեր փաստարկված դիրքորոշումը:

Ինչպես կազմել խնդիր

Ուսուցման գործընթացում Մոկրաստյան մեթոդի առավել արդյունավետ կիրառման համար չափազանց կարևոր նշանակություն ունի խնդրի ճիշտ կազմումը: Ամենակարևոր պահանջը, որը պետք է ներկայացվի խնդրին՝ այն պետք է պարունակի այնպիսի «նրբություններ», որոնք մտածելու տեղիք կտան և խնդրի ճիշտ լուծումը պայմանավորված կլինի այդ «նրբությունների» վեր հանումով:

Խնդրում կարող են տեղ գտնել այնպիսի «նրբություններ», որոնք պայմանավորված են տարբեր գործոններով, օրինակ՝ առանձին հասկացությունների վերաբերյալ իրավական կարգավորումների բացակայությամբ: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքում սահմանված չէ, թե ինչը պետք է դիտարկել որպես «բնակարան», ուստի հաճախ վեճերի տեղիք է տալիս, թե արդյո՞ք բնակարան մուտք գործելով հափշտակություն կարող է որակվել, եթե անձը հափշտակություն է կատարել հիվանդասենյակից, գնացքի ուղևորախցիկից, նավախցիկից, հյուրանոցի համարից, սեփականատիրոջը պատկանող շինության մաս հանդիսացող և բնակության համար օգտագործվող սենյակներից փակվող դռնով չառանձնացված մառանից կամ հացատնից և այլն: Բնական է, որ նման պարագայում հարցի պատասխանը միանշանակ լինել չի կարող, քանի որ դրա հասկացության պարզաբանման համար կարող են օգտագործվել, օրինակ, իրավական այլ ակտերում «բնակարան» հասկացության բնորոշումները, դատական գործերի քննության ժամանակ խնդրո առարկայի վերաբերյալ դատարանի դրսևորած դիրքորոշումներ, դոկտրինալ մեկնաբանությունները:

Խնդրում «նրբությունները» կարող են նաև օբյեկտիվորեն պայմանավորված լինել այնպիսի իրավիճակներով, երբ հարցի պատասխանը պայմանավորված է կոնկրետ իրավիճակի բոլոր մանրամասների վեր հանմամբ: Օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքում հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտի բնորոշման ժամանակ նշվում է, որ անձը պետք է հանցագործությունը դադարեցնի կամովին, բայց օրենսդիրը չի պարզաբանում, թե ո՞ր դեպքերը պետք է դիտարկվեն «կամովին»: Օրինակ, կարելի է արդյոք «կամովին» դիտարկել բռնաբարություն կատարելու նպատակով տուժողի վրա հարձակված անձի կողմից ոտնձգությունը դադարեցնելը այն բանից հետո, երբ տուժողը հայտարարում է, որ ինքը տառապում է ՁԻԱՀ-ով, թե՞ ոչ: Առաջադրված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե տուժողի մոտ ՁԻԱՀ-ի առկայությունը ոտնձգողի համար եղել է հաղթահարելի, թե՞ անհաղթահարելի խոչընդոտ: Մինչդեռ խնդրում մանրամասները կարող են չլինել, և

նման պարագայում ուսանողները պետք է ներկայացնեն խնդրի լուծման իրենց տարբերակը՝ փաստարկումներով: Օրինակ, ուսանողը կարող է նշել, որ առկա է կամովին հրաժարում, քանի որ ոսնձգողը ծանոթ չի եղել ՁԻԱՀ հապավմանը, չի հասկացել, որ խոսքը անբուժելի և կյանքի համար վտանգ ներկայացնող հիվանդության մասին է կամ ինքն էլ է հիվանդ եղել ՁԻԱՀ-ով կամ տեղյակ է եղել, թե ինչ է ՁԻԱՀ-ը, բայց կարծել է, որ դա հնարավոր է բուժել մի քանի ասեղ հակաբիոտիկների ներարկմամբ:

Խնդրում «նրբությունները» կարող են պայմանավորված լինել օգտագործվող եզրույթների քերականական մեկնաբանությամբ, խնդրո առարկայի վերաբերյալ իրավունքի առանձին ճյուղերի և Սահմանադրության կամ ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավական ակտերի կանոնակարգումների տարբերությամբ, նույն հարցի շուրջ իրավական տարբեր ակտերում կանոնակարգման տարբեր մոտեցումների առկայությամբ և այլն:

Խնդրում «նրբությունների» առկայությունը ուսանողին ստիպում է ոչ միայն վերարատադրել իրավական նորմերի իմացության ոլորտում իր գիտելիքները, այլև վերլուծել, համադրել խնդրի պայմանները իրավական կարգավորման տարբերակների հետ, լրիվ նույնականացման անհնարինության դեպքում՝ առաջ քաշել նոր տարբերակներ, փաստարկներ՝ հիմնվելով իրավունքի հիմնարար սկզբունքների վրա: Նման մեթոդը խթանում է ուսանողի ինքնուրույն, ստեղծագործական մտածողությունը, փաստարկման կարողությունը, ինչը չափազանց կարևոր է իրավակիրառ գործունեություն ծավալելու համար:

Այն դեպքերում, երբ խնդիրը գերծ է նման «նրբություններից» և դրա միանշանակ լուծումը հիմնված է զուտ իրավական նորմի մեկնաբանության վրա, ապա Սոկրատյան մեթոդի կիրառումը նույնպես հնարավոր կլինի, պայմանով, որ դասախոսը կազմի հարցեր, որոնք կպահանջեն ոչ միայն խնդրի լուծում, այլև դրա հիմնավորում՝ տարբեր փաստարկումների միջոցով: Մակայն այս պարագայում, Սոկրատյան մեթոդի կիրառման հիմնական «բեռը» կրում է ոչ թե խնդիրը, դրանում ներկայացված փաստերը, այլ դրան հաջորդող հարցերը, որոնք նպատակ ունեն ամրապնդել ուսանողի գիտելիքները:

Նմուշ խնդիրներ՝ հարցերով

1. Կ.-ն, անտառում հանդիպելով 17-ամյա Մ.-ին և նրա 10-ամյա քրոջը՝ Ն.-ին, որոշեց բռնաբարել վերջինիս: Այդ նպատակով նա գետին տապալեց Ն.-ին և սկսեց մերկացնել: Մ.-ն, հասկանալով Կ.-ի մտադրությունը և փորձելով փրկել քրոջը, խնդրեց ազատ արձակել Ն.-ին՝ դրա փոխարեն առաջարկելով, որ Կ.-ն իր հետ սեռական հարաբերության մեջ մտնի: Կ.-ն համաձայնվեց, կապկպեց Ն.-ին, որ վերջինս չփախչի, ապա սեռական հարաբերություն ունեցավ Մ.-ի հետ:

Նախաքննության մարմինը Կ.-ին պատասխանատվության ենթարկեց Ն.-ի հանդեպ բռնաբարության փորձ և Մ.-ի հանդեպ բռնաբարություն կատարելու համար:

Կ.-ի փաստաբանը, սակայն, պահանջեց ազատ արձակել իր պաշտպանյալին, քանի որ, ըստ փաստաբանի, Ն.-ին բռնաբարելուց Կ.-ն կամովին հրաժարվել էր, իսկ Մ.-ի հետ սեռական հարաբերությունը տեղի էր ունեցել վերջինիս համաձայնությամբ:

1. Ո՞վ է ճիշտ՝ նախաքննության մարմինը, թե՞ փաստաբանը:

2. Ինչու՞ էք կարծում, որ ճիշտ է նախաքննության մարմինը (փաստաբանը):

3. Կարելի է արդյոք ասել, որ Մ.-ն իր կամքով է մտել սեռական հարաբերության մեջ, երբ քույրը սեքսուալ ոտնձգության վտանգի տակ էր:

4. Մ.-ի վարքագիծը կամովին կամ հարկադրված դիտարկելիս, որևէ նշանակություն ունի՞ այն, որ նա 17 տարեկան էր:

5. Ի՞նչ է ենթադրում կամովին հրաժարման ինստիտուտը:

6. Այդ ինստիտուտի կտրվածքով՝ ի՞նչպես պետք է հասկանալ կամովինությունը:

7. Կարելի է արդյո՞ք կամովին դիտել այն իրավիճակը, երբ հանցավորը ունի ընտրության հնարավորություն և փաստացի իր ցանկությունը բավարարվում է:

8. Կարող էր արդյո՞ք ոտնձգողը սեքսուալ ոտնձգություն կատարել երկուսի նկատմամբ էլ:

9. Կփոխվեր արդյո՞ք իրավիճակը, եթե 10-ամյա Ն.-ն անտառից դուրս փախչեր և համագյուղացիներին օգնության կանչեր:

2. Պահեստապետ Կ.-ն սիստեմատիկաբար հափշտակում էր իրեն վստահված գույքը: Տեղեկանալով սպասվելիք ստուգումների մասին՝ Կ.-ն հափշտակության հետքերը թաքցնելու նպատակով որոշեց սպանել պահեստի պահակին, այրել պահեստը՝

դրանով իսկ ուրիշների կողմից ավագակային հարձակման պատրանք ստեղծելով: Այդ նպատակով նա պայմանավորվեց Գ.-ի, Օ.-ի և Մ.-ի հետ: Գ.-ն պարտավորվեց Կ.-ին տալ դաշույն և կացին՝ պահակի սպանությունը կատարելու համար: Հետագայում Գ.-ն հանցակիցներին հայտնեց, որ ինքը հրաժարվում է մասնակցել հանցագործությանը:

Մյուս հանցակիցները պայմանավորված օրը կատարեցին հանցանքը՝ պահակի սպանության համար այլ զենք օգտագործելով:

1. Ենթակա՞ւարդյոքԳ.-նքրեականպատասխանատվության:
2. Կարելի է արդյո՞ք ասել, որ Գ.-ն կամովին հրաժարվել է հանցագործությունից:
3. Ինչպե՞ս է կարգավորվում հանցակիցների կամովին հրաժարման գործընթացը:
4. Կարելի է արդյո՞ք ասել, որ Գ.-ն Օ.-ի և Մ.-ի հանցակիցն է:
5. Եթե հանցակից է, ապա ո՞ր հիմքով:
6. Կփոխվեր արդյո՞ք իրավիճակը, եթե Գ.-ն դաշույնն արդեն տված լիներ Օ.-ին և Մ.-ին:
7. Կփոխվեր արդյո՞ք իրավիճակը, եթե Գ.-ն դաշույնն արդեն տված լիներ Օ.-ին և Մ.-ին, սակայն հրաժարվեր և հետ վերցնէր այն:

3. Շ.-ն կինոթատրոնում ծանոթացավ մի կնոջ հետ և վերջինիս հրավիրեց իր տուն: Տանը Շ.-ն ցանկացավ նրա հետ սեռական հարաբերություն ունենալ: Երբ վերջինս հրաժարվեց՝ Շ.-ն ցանկացավ բռնաբարել նրան, սակայն, երբ կինը հայտարարեց, թե ինքը ՁԻԱՀ-ով (ՍՊԻԴ) է տառապում, Շ.-ն դադարեցրեց իր գործողությունները և կնոջը տանից դուրս հանեց:

1. Կարելի՞ւարդյոքասել, որՇ.-նկամովինհրաժարվելէհանցագործությունից:
2. Ի՞նչ է ենթադրում կամովին հրաժարման ինստիտուտը:
3. Այդ ինստիտուտի կտրվածքով՝ ի՞նչպես պետք է հասկանալ կամովինությունը:
4. Հրաժարումը կամովին դիտելու համար, ի՞նչ նշանակություն ունի խոչընդոտի բնույթը՝ հաղթահարելի, դժվար հաղթահարելի կամ անհաղթահարելի:
5. Խոչընդոտի բնույթը գնահատելիս՝ ո՞ր չափանիշն է ավելի կարևոր՝ օբյեկտիվ, թե սուբյեկտիվ:
6. Կարող ե՞ք արդյո՞ք ներկայացնել փաստարկներ, որոնք կվկայեն, որ Շ.-ն կամովին չի հրաժարվել հանցանքն ավարտին հասցնելուց:

4. Ֆ.-ն, ով ծնվել էր որպես իգական սեռի ներկայացուցիչ, սակայն սեռի փոփոխության վիրահատության էր ենթարկվել և իրավաբանորեն համարվում էր տղամարդ, չորս անձի առանձին դաժանությամբ զրկեց կյանքից: Ֆ.-ին ենթարկեցին քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 104-ի երկրորդ մասով, որի սանկցիան նախատեսում է ազատազրկում տասներկուսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկում: Իր փաստաբանից տեղեկանալով, որ ցմահ ազատազրկում չի կիրառվում հղի կանանց նկատմամբ՝ Ֆ.-ն որոշեց ամեն գնով հղիանալ: Ֆ.-ն կաշառեց բանտային բժիշկ Ս.-ին, որն էլ Ֆ.-ին արհեստական բեղմնավորում կատարեց: Գործի նախնական քննության ժամանակ Ֆ.-ն քննիչից պահանջեց իրավաբանորեն հավաստել, որ ինքը կին է, ինչի վկայությունն էլ իր հղիությունն է: Ֆ.-ի պահանջը չբավարարվեց: Դատական քննության ժամանակ դատավոր Տ.-ն Ֆ.-ին դատապարտեց ցմահ ազատազրկման:

1. Ճի՞շտ է արդյոք Տ.-ն կիրառել պատիժը:
2. Ո՞ր դեպքերում ցմահ ազատազրկում չի կարող կիրառվել:
3. Ցմահ ազատազրկում չկիրառելու հիմքում ին՞չն է դրված՝ հանցանքի կատարման պահին, թե դատավճռի կայացման պահին հղիությունը:
4. Գործող օրենսդրությունը ցմահ ազատազրկման կիրառման արգելք է դիտում կնոջ հղիությունը. օրենսդիրը ո՞ր արժեքն է պաշտպանում նման ձևակերպմամբ:
5. Ինչպե՞ս է որոշվում անձի սեռը: Սեռը որոշելիս որևէ նշանակություն ունի արդյո՞ք այն, որ անձը սեռափոխանակության է ենթարկվել:
6. Արդյո՞ք ՀՀ-ում հանցանքի կատարման համար պատասխանատվություն սահմանելիս հնարավոր է խտրականություն՝ կապված սեռից:
7. Արդյո՞ք ՀՀ Սահմանադրությունը և վավերացված միջազգային կոնվենցիաները չեն հոչակում օրենքի առջև հավասարությունը:
8. Արդյո՞ք նշված ակտերը բարձրագույն իրավաբանական ուժ չունեն քրեական օրենսգրքի նկատմամբ: